



Ալբերտ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու,
ասիստենտ

2012 թ. ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը՝ տնտեսագիտության տեսություն մասնագիտությամբ: ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում ստացել է տնտեսագիտության մագիստրոսի որակավորում՝ «Մենեջմենթ» մասնագիտությամբ, 2017 թ.՝ տնտեսագիտության թեկնածուի գիտական ասպիրանտ: 2018 թ.-ից դասավանդում է ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնում: Հեղինակ է 12 գիտական հոդվածների:

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ.

ԳԵՐՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԻԱՎՈՐՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅՏԱՐԱՐ

DOI: 10.52174/2579-2989_2022.3-98

Հիմնաբառեր. գիտություն, դիվանագիտություն, Արկտիկայի խորհուրդ, Անտարկտիկայի համաձայնագիր, Միջազգային տնտեսական կայան

Ըստ Բերկմանի սահմանման՝ գիտության դիվանագիտությունը միջազգային, միջգիտակարգային, համընդգրկուն գործունեություն ու գործընթաց է՝ միտված ազգային և համամարդկային շահերի հավասարակշռմանը՝ ի նպաստ մարդկության և սերունդների: Գիտական բացառիկ հետազոտություններում այն, ինքնըստինքյան, հանդես է գալիս որպես գերտնտեսությունների միջև տարածայնությունների հաղթահարման միջոց: Անգամ երբ միջազգային լարվածությունն իր բարձրակետին է հասնում, պետությունները չեն հրաժարվում գիտության դիվանագիտությունից՝ շարունակելով իրենց համագործակցությունը: Հոդվածում դիտարկվում է, թե ինչպես է գիտական դիվանագիտությունը դրսևորվում Արկտիկայում, Անտարկտիկայում և Միջազգային տնտեսական կայանում:

Միջազգային հարաբերությունների ռեալիզմի դպրոցի տեսաբանների կարծիքով, գերտնտեսությունները միմյանց հետ մրցակցում են գերիշխանության, ազդեցության գոտիների ու ռեսուրսների համար՝ այդ մրցակցության մեջ չխորշելով անգամ լայնածավալ պատերազմներ հրահրելուց և մեծ թվով մարդկանց կյանքեր զոհելուց: Այսօր էլ միջազգային լրահոսը լի է գերտնտեսությունների փոխադարձ քննադատությունների, բախումների, թեժ մրցակցության, պրոքսի պատերազմների, ռազմական հզորության միջոցով «մկանների ցուցադրության» և նմանատիպ այլ դրսևորումների մասին լուսաբանումներով, մինչդեռ անհամեմատ ավելի քիչ են հրապարակումներն առ այն, որ, ի հեճուկս անհաղթահարելի թվացող տարածայնությունների և գեր-

լարված հարաբերությունների, այդ նույն գերտերությունները գիտության ոլորտում շատ դեպքերում միմյանց հետ արդյունավետ կերպով համագործակցում են: Այդպիսի համագործակցությունը հաճախ անվանում են գիտության դիվանագիտություն, որը ենթադրում է ինչպես դիվանագիտության միջոցով գիտական հիմնախնդիրների արդյունավետ լուծում, այնպես էլ գիտության միջոցով միջպետական հարաբերությունների սերտացում՝ այդպիսով միջպետական շփման նոր եզրեր գտնելով: Գիտության դիվանագիտությունը սահմանվում է որպես միջազգային, միջգիտակարգային, համընդգրկուն գործունեություն և գործընթաց՝ միտված ազգային և համամարդկային շահերի հավասարակշռմանը՝ ի նպաստ մարդկության և սերունդների¹: Անշուշտ, համամարդկային և համամոլորակային մի շարք խնդիրների լուծումը, ինչպիսիք են, օրինակ՝ գլոբալ տաքացումը, անապատացումը, ցամաքային ու ծովային կենսաբազմազանության ապահովումը, վեր է առանձին պետություն-

ների, նույնիսկ գերտերությունների ուժերից և ենթադրում է բոլոր ազգերի ու ժողովուրդների համագործակցություն: Եվ ամենևին էլ պատահական չէ, որ ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներից ամենավերջինը՝ 17-րդը, որը, կարծես, «սուրն-ձող» դեր է կատարում մնացյալ 16-ի համար, հենց միջազգային համագործակցության ու գործընկերության մասին է (նկար 1):

Մյուս կողմից, մեր մոլորակում կան տարածքներ, իսկ մոլորակից դուրս՝ գործունեության ոլորտներ, որոնք, ի հեճուկս մի քանի պետության պնդումների ու հավակնությունների, չեն կարող «սեփականաշնորհվել» առանձին երկրների կողմից, իսկ այդ տարածքների ու ոլորտների համար վերոնշյալ ռեալիստական մոտեցումներին համահունչ քաղաքականությունը կարող է հանգեցնել անկանխատեսելի ու կործանարար հետևանքներով հղի համաշխարհային բախման: Խոսքը, մասնավորապես, Արկտիկայի և Անտարկտիկայի, ինչպես նաև տիեզերքում գործունեու-

SUSTAINABLE DEVELOPMENT GOALS



ՆԿԱՐ 1

ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակները²

¹ Berkman, Paul Arthur, Science diplomacy and its engine of informed decisionmaking: operating through our global pandemic with humanity. The Hague Journal of Diplomacy 15, no. 3 (2020): 435-450.
² Վերցված է ՄԱԿ-ի պաշտոնական կայքից, հետևյալ հղմամբ՝ <https://www.un.org/en/sustainable-development-goals>

թյան ծավալման մասին է: Արկտիկային, Անտարկտիկային և միջազգային տիեզերակայանին վերաբերող հարցերում հաճախ միմյանց հետ ներհակ նպատակներ ունեցող գերտերությունների համագործակցությունը գիտության դիվանագիտության բացառիկ հաջողված օրինակներից է:

Արկտիկային վերաբերող հարցերում գերտերությունների քաղաքականությունը մշտապես եղել է համագործակցային, որի ինստիտուցիոնալացման բարձրակետը 1996 թ.-ին Կանադայի մայրաքաղաք Օտտավայում Արկտիկայի խորհրդի հիմնադրումն էր: Խորհրդի ստեղծման նպատակը Արկտիկային վերաբերող հարցերում անդամ պետությունների համակարգված քաղաքականության մշակումն էր: Արկտիկայի խորհրդին անդամակցում է ութ պետություն՝ Կանադա, Իսլանդիա, Միացյալ Թագավորություն, Ռուսաստան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Նորվեգիա, Շվեդիա և Ֆինլանդիա: Խորհրդի հիմնադրման հռչակագրի նախաբանում ընդգծվում են տարածաշրջանի կայուն զարգացումը, շրջակա միջավայրի պահպանությունը և, որ առավել հատկանշական է, տեղաբնիկ ժողովուրդների գիտելիքներն Արկտիկային վերաբերող հարցերում: Առանձնահատուկ կերպով մատնանշվում է նաև Ինյուիտ, Սաամի և տեղաբնիկ այլ ժողովուրդների ներդրումը խորհրդի ձևավորման գործում³: Նշյալ ժողովուրդներին միավորող, ինչպես նաև չորս՝ այլ բնիկ ժողովուրդներին ներկայացնող կազմակերպություններն ունեն խորհրդի մշտական մասնակցի, իսկ 40 այլ երկրներ ու միջազգային կազմակերպություններ՝ դիտորդի կարգավիճակ⁴: Համաձայն նշյալ հռչակագրի 2-րդ կետի՝ մշտական կարգավիճակի համար կազմակերպությունը կամ պետք է ներկայացնի Արկտիկայի մեկից ավելի երկրներում ապրող բնիկ ժողովրդի, կամ էլ միևնույն երկրում բնակվող՝ Արկտիկայի մեկից ավելի բնիկ ժողովուրդների: Խորհրդի որոշում-

ներն ընդունվում են անդամ բոլոր ութ երկրների միաձայնության (կոնսենսուսի) պարագայում: Խորհրդի քարտուղարությունը Նորվեգիայի Տրոմսո քաղաքում է: Անդամ երկրների ներկայացուցիչները երկու տարին մեկ հավաքվում են Խորհրդի գործունեությանը վերաբերող հարցերի քննարկման նպատակով: Խորհրդի շըրջանակներում անդամ պետությունները ստորագրել են իրավական առումով պարտադիր բնույթ կրող հետևյալ երեք համաձայնագրերը.

1. Արկտիկայում օդազնացության, ծովային որոնողական և փրկարարական համագործակցության մասին համաձայնագիրը (2011 թ.),

2. Արկտիկայում ծովային նավթի աղտոտվածությանը պատրաստված լինելու և արձագանքելու մասին համաձայնագիրը (2013 թ.),

3. Արկտիկայի վերաբերյալ միջազգային գիտական համագործակցության ընդլայնման մասին համաձայնագիրը (2017 թ.)⁵:

Նշյալ համաձայնագրերը, ի թիվս այլ դրույթների, ներառում են հետևյալ հարցերի շուրջ անդամ երկրների համաձայնությունը.

- հետազոտական գործունեության համար անհրաժեշտ վիզաների տրամադրման դյուրացում և արագացում,
- Արկտիկային վերաբերող տեղեկությունների թվայնացում և հասանելիության մակարդակի բարձրացում,
- Արկտիկայի հարցերով զբաղվող գիտնականների հաջորդ սերնդի պատրաստման նպատակով դասընթացների ու ամառային դպրոցների կազմակերպում,
- Արկտիկային վերաբերող համընդհանուր հետաքրքրության հարցերի վերաբերյալ համեմատական ուսումնասիրությունների համատեղ իրականացում,
- սառցաբեկորներ տրոհող սարքավորումների և այլ ենթակառուցվածքների՝

³ Arctic Council, Declaration of the Establishment of the Arctic Council, September 19, 1996, available at https://oarchive.arctic-council.org/bitstream/handle/11374/85/EDOCS-1752-v2-ACMMCA00_Ottawa_1996_Founding_Declaration.PDF?sequence=5&isAllowed=y

⁴ Arctic Council, International Cooperation in the Arctic, <https://www.arctic-council.org/explore/work/cooperation/>

⁵ Նույն տեղում:

գիտական գործունեության մեջ հնարավոր առավելագույն ներդրում և կիրառություն,

- բնական, հասարակական և հումանիտար գիտությունների, ինչպես նաև միայն բնիկ ժողովուրդներին հասու գիտելիքի համադրմամբ նորարարական լուծումների մշակում՝ միտված համընդհանուր մտահոգիչ խնդիրների լուծմանը⁶:

2013 թ.-ին Արկտիկայի խորհրդի անդամ պետությունները Շվեդիայի Կիրունա քաղաքում հրապարակեցին Արկտիկայի տեսլականը, որի հիմնական խորագրերն են.


1. Խաղաղ Արկտիկա,
2. Արկտիկան իբրև բոլորի «տուն»,
3. Բարգավաճ Արկտիկա,
4. Անվտանգ Արկտիկա,
5. Արկտիկայի առողջ միջավայր,
6. Արկտիկայի վերաբերյալ գիտելիք,
7. Առավել ուժեղ Արկտիկայի խորհուրդ⁷:

**Համագործակցություն
Անարկտիկայում**

Անտարկտիկայում և վերջինիս վերաբերող հարցերում համագործակցության ինստիտուցիոնալացման բարձրակետը 1959 թ.-ի դեկտեմբերի 1-ին Վաշինգտոնյան համաձայնագրի ստորագրումն էր 12 պետությունների՝ Արգենտինայի, Ավստ-

րալիայի, Բելգիայի, Չիլիի, Ֆրանսիայի, Ճապոնիայի, Նորվեգիայի, Նոր Զելանդիայի, Հարավային Աֆրիկայի, ԽՍՀՄ-ի, Միացյալ Թագավորության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից: Նշյալ պետություններից 7-ը՝ Արգենտինան, Ավստրալիան, Չիլին, Ֆրանսիան, Նոր Զելանդիան, Նորվեգիան և Միացյալ Թագավորությունը, Անտարկտիկայում տարածքային խնդիրներ ունեն, այսինքն՝ վերջիններիս կողմից ներկայացված տարածքային հավակնությունները որոշ դեպքերում մասնակիորեն համընկնում են⁸: Համաձայնագրին միացած մյուս երկրները տարածքային պահանջներ ու հավակնություններ չունեն, սակայն Միացյալ Նահանգներն ու Ռուսաստանը (որպես ԽՍՀՄ-ի իրավահաջորդ) նշել են, որ ապագայում՝ յուրաքանչյուր պահի, իրենց իրավունք են վերապահում հայտարարություններ անելու իրենց հավակնությունների մասին (նկար 2):

Անտարկտիկայի համաձայնագրի գրված խավոր նպատակը տվյալ տարածքը որոշ մարդկության շահերից բխող գործողությունների համար օգտագործելն է: Բացի այդ, համաձայնագիրը երաշխավորում է գիտական հետազոտությունների ազատությունը և կարևորում միջազգային համագործակցության ապահովումը: Այդ նպա-



ՆԿԱՐ 2

Անտարկտիկայում տարածքային պահանջների քարտեզը, ներառյալ՝ Մարի Բերդ հողակտորը, որի մեծ մասի վերաբերյալ տարածքային պահանջներ չեն ներկայացվել

⁶ Berkman, Paul Arthur, Lars Kullerud, Allen Pope, Alexander N. Vylegzhanin, and Oran R. Young. "The Arctic science agreement propels science diplomacy." Science 358, no. 6363 (2017): 596-598.
⁷ Arctic Council, International Cooperation in the Arctic, <https://www.arctic-council.org/explore/work/cooperation/>
⁸ The Secretariat of the Antarctic Treaty, The Antarctic Treaty, available at <https://www.ats.aq/e/antarctictreaty.html>

տակով համաձայնագրի 3-րդ հոդվածը նախատեսում է հետևյալը.

- գիտական գործունեության վերաբերյալ տեղեկությունների փոխանակում,
- կայանների և առաքելությունների գիտական անձնակազմի պարտադիր փոխայցելություններ,
- գիտական գործունեության արդյունքների և վերլուծությունների փոխանակում⁹:

Ըստ համաձայնագրի՝ ցանկացած տիպի միջուկային պայթյունների իրականացումը և ռադիոակտիվ նյութերի թաղումը մայրցամաքի տարածքում արգելված է: Համաձայնագրի կիրարկման վերաբերյալ յուրաքանչյուր վեճ պետք է լուծվի բացառապես բանակցությունների միջոցով, հաշտարարի կամ արբիտրաժի օգնությամբ կամ էլ դատական կարգով, իսկ եթե նշյալ միջոցներով վեճը չի լուծվում, ապա կողմերի համաձայնությամբ լուծումը պետք է վերապահվի ՄԱԿ-ի արդարադատության միջազգային դատարանին (ԱԴԲ):

Անտարկտիկայի համաձայնագրին կից գործում է երեք փաստաթուղթ՝ որպես Անտարկտիկայի համաձայնագրի համակարգ: Այդ փաստաթղթերն են.

- Անտարկտիկայի պայմանագրում շրջակա միջավայրի պաշտպանության մասին արձանագրությունը (Մադրիդ, 1991 թ.),
- Անտարկտիկայի փոկերի պաշտպանության կոնվենցիան (Լոնդոն, 1972 թ.),
- Անտարկտիկայի ծովային կենդանիների պաշտպանության մասին կոնվենցիան (Կանբերա, 1980 թ.)¹⁰:

1982 թ.-ին ուժի մեջ է մտել Անտարկտիկայի ծովային կենդանի ռեսուրսների պաշտպանության կոնվենցիան (ԱԾԿՌՊ)¹¹, որը նախատեսում է համապատասխան տարածքում ծովային կենդանի ռեսուրսների պահպանում և արդյունավետ օգտագործում: Կոնվենցիայով պաշտպանված տարածքն այնքան էլ չի համընկնում Անտարկտիկայի համաձայնագրի հետ. համաձայնագիրն ընդգրկում է 60-րդ զուգա-

հեռականից հարավ ընկած տարածքը, մինչդեռ կոնվենցիայի տարածքը ներառում է նաև 60-րդ հարավային և Անտարկտիկայի կոնվերգենցիայի միջև ընկած տարածքը (բնական պատնեշ, որը որոշ տեղերում 60-րդ զուգահեռականից հյուսիս է)¹²:

Արգենտինայի մայրաքաղաք Բուենոս Այրեսում է տեղակայված Անտարկտիկայի համաձայնագրի քարտուղարությունը, որի առաքելությունն է աջակցել Անտարկտիկայի պայմանագրի խորհրդատվական հանդիպմանը և Շրջակա միջավայրի պաշտպանության կոմիտեին իր գործառույթները կատարելիս՝ նպատակ ունենալով ամրապնդելու Անտարկտիկայի համաձայնագրի համակարգը: Վերջինս հետևում է, որ մայրցամաքում բոլոր գործողությունները թխեն Անտարկտիկայի համաձայնագրի տառից և ոգուց:

Համագործակցություն միջազգային տիեզերական կայանում

Միջազգային տիեզերական կայանը (ՄՏԿ) մարդկության կողմից երբևէ ստեղծված ամենաթանկարժեք նախագիծն է, որի վրա ստեղծման օրվանից՝ 1998 թ.-ից ի վեր, ավելի քան 150 մլրդ ԱՄՆ դոլար է ծախսվել: ՄՏԿ-ն մարդկության պատմության մեջ թվով երկրորդ ուղեծրային տիեզերակայանն է: Առաջինը ԽՍՀՄ-ի կողմից ստեղծված «Միր» կայանն էր, որն ուղեծրում անընդմեջ անցկացրել է ուղիղ 9 տարի և 357 օր: ՄՏԿ-ն վաղուց գերազանցել է նշյալ ցուցանիշը՝ ուղեծրում անընդմեջ մնալով մոտ 24 տարի: ՄՏԿ-ն համատեղ միջազգային նախագիծ է, որին մասնակցում է 15 երկիր (Բելգիա, Բրազիլիա, Գերմանիա, Դանիա, Իսպանիա, Իտալիա, Կանադա, Նիդեռլանդներ, Նորվեգիա, Ռուսաստան, ԱՄՆ, Ֆրանսիա, Շվեյցարիա, Շվեդիա, Ճապոնիա)¹³: ՄՏԿ-ն բաղկացած է 6 ռուսական և 10 ամերիկյան մոդուլներից: ՄՏԿ-ն ռուսական մոդուլով կառավարվում է Կորոլյովի տիեզերական թռիչքների կառավարման կենտրոնից: Ամերիկյան մոդուլով կառավարումն իրա-

⁹ Նույն տեղում:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում:


¹² The Secretariat of the Antarctic Treaty, The Antarctic Treaty, available at <https://www.ats.aq/e/antarctictreaty.html>

¹³ "Human Spaceflight and Exploration – European Participating States". European Space Agency (ESA). 2009. Retrieved 17 January 2009.

կանացվում է Հյուսթոնի Լինդոն Ջոնսոնի անվան տիեզերական թռիչքների կառավարման կենտրոնից: Եվրոպական «Կոլումբոս» ու ճապոնական «Կիբո» լաբորատոր մոդուլները կառավարում են Եվրոպական տիեզերական գործարարության ղեկավարության ու Ճապոնիայի օդատիեզերական հետազոտությունների գործակալության կենտրոնները: Կենտրոնների միջև տեղի է ունենում տեղեկությունների ամենօրյա փոխանակում: Կայանը ծառայում է որպես միկրոգրավիտացիայի և տիեզերական միջավայրի հետազոտական լաբորատորիա, որտեղ համատեղ հետազոտություններ են իրականացվում աստղագիտության, աստղակենսաբանության, օդերևութաբանության, ֆիզիկայի և հարակից բնագավառներում:

Կայանի գործունեությունը կարգավորվում է 1998 թ.-ին ստորագրված «Միջազգային տիեզերական կայանի» մասին հա-

մաձայնագրով: Համաձայնագրի 1-ին հոդվածում նշվում է, որ Միացյալ Նահանգների առաջնորդությամբ համաձայնագրի կողմերը պետք է մեկտեղեն ջանքերը միջազգային տիեզերակայանի ստեղծման ուղղությամբ: Նշվում է նաև, որ ԱՄՆ-ը և Ռուսաստանը, հաշվի առնելով դեպի տիեզերք թռիչքների ոլորտում իրենց ունեցած մեծ փորձը, կարտադրեն ապագա կայանի համար անհրաժեշտ տարրերը: Որպես կայանի ստեղծման առաքելություն՝ նշվում է տիեզերքի գիտական, տեխնոլոգիական և առևտրային նպատակներով օգտագործումը¹⁴: Համաձայնագրի հավելվածում թվարկված են այն բոլոր տարրերը, որոնք գործընկեր երկրներից յուրաքանչյուրն իր տիեզերական գործակալության միջոցով պետք է տրամադրի կայանի անխափան գործունեության ապահովման համար¹⁵: Համաձայնագիրը ՄՏԿ գործունեությունը կարգավորող քառաշերտ իրավական հա-



ՆԿԱՐ 3

Միջազգային տիեզերական կայան¹⁶

¹⁴ US Government, Treaties and other international act series 1927, Arrangement Between the UNITED STATES OF AMERICA and OTHER GOVERNMENTS Signed at Washington January 29, 1998 available at <https://www.state.gov/wp-content/uploads/2019/02/12927-Multilateral-Space-Space-Station-1.29.1998.pdf>

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Վերցված է Օդազնացության և տիեզերական տարածության հետազոտությունների ազգային գործակալության (ՆԱՍԱ) պաշտոնական կայքից, հետևյալ հղմամբ՝ <https://www.nasa.gov/audience/forstudents/5-8/features/nasa-knows/what-is-the-iss-58.html>

մակարգի ամենակարևոր բաղադրիչն է: Իրավական համակարգի մնացյալ երեք բաղադրիչները վերաբերում են համաձայնագրում նշված փոխըմբռնման հուշագրերին: Մասնավորապես՝ երկրորդ բաղադրիչը ամերիկյան NASA-ի և գործընկեր տիեզերական գործակալությունների (Ռուկոսմոս, Եվրոպական տիեզերական գործակալություն, Կանադայի տիեզերական գործակալություն և Ճապոնիայի տիեզերական գործակալություն) միջև կնքված համաձայնագրերի մասին է, ըստ որոնց՝ սահմանված են յուրաքանչյուր գործակալության դերն ու գործառույթները: Երրորդ՝ գործակալությունների միջև բարտերային առևտրի վերաբերյալ համաձայնագրերն են: Եվ, վերջապես, վերջին՝ լրացուցիչ բաղադրիչը, վերաբերում է բուն ՄՏԿ-ում իրավահարաբերությունների կարգավորմանը՝ անձնակազմի անդամների վարքագծի կանոններ, քրեաիրավական տիրույթին վերաբերող հարցերի պարագայում քննչական պատկանելություն և այլն: Հավելենք, որ կայանի ստեղծումից ի վեր ինչպես անձնակազմով, այնպես էլ առանց անձնակազմի ուղևորություններն իրականացվել են ռուսական «Սոյուզ», իսկ վերջերս՝ նաև ամերիկյան «Սփեյքս» հրթիռներով: Եվ վերջապես, ՄՏԿ կառուցումը, թիվս այլ բարիքների, զարկ է տվել նաև տիեզերական զբոսաշրջության զարգացմանը:

Վերջաբանի փոխարեն

Համագործակցությունն Արկտիկայում, Անտարկտիկայում և ՄՏԿ-ում դիվանագիտության միջոցով գիտական և, ինչու ոչ, գիտության միջոցով դիվանագիտական խնդիրների լուծման փայլուն օրինակ է: Գիտության շուրջ և գիտության միջոցով համախմբումը թույլ է տալիս խուսանավել, օրինակ՝ Արկտիկայի կամ Անտարկտիկայի համար գերտերությունների միջև սուր հակամարտությունից կամ առնվազն նվազեցնել վերջինիս ռիսկը: Ցայսօր և՛ Արկտիկայում, և՛ Անտարկտիկայում, և՛ ՄՏԿ-ում համագործակցությունը հաղթել է մրցավազքին և հակամարտությանը, և անգամ ուկրաինական հակամարտության լույսի ներքո Ռուսաստանը և ԱՄՆ-ը շարունա-

կում են գործակցել Արկտիկայի խորհրդրում և ՄՏԿ-ում, և սա այն դեպքում, երբ 1998 թ.-ին կնքված «Միջազգային տիեզերական կայանի» մասին համաձայնագրով յուրաքանչյուր պետություն իրավունք ունի դուրս գալու համաձայնագրից՝ այդ մասին մեկ տարի առաջ նախապես տեղյակ պահելով գործընկեր պետություններին: Ռուսաստանը նաև շարունակում է Անտարկտիկայի համաձայնագրի անդամ լինել, ի տարբերություն, օրինակ՝ Եվրոպայի խորհրդի, որտեղ դադարեցրել է իր անդամակցությունը՝ ուկրաինական իրադարձություններով պայմանավորված:

Այս ամենը վկայում է, որ գիտության դիվանագիտությունն անգամ գերտերությունների միջև խոր անհամաձայնությունների և նույնիսկ տնտեսական ոլորտում համագործակցության ընդհատման հանգեցնող պատժամիջոցների պարագայում ի զորու է հանդես գալու որպես ընդհանուր հայտարար: Պատկերավոր ասած, գիտությունն ու գիտական համագործակցությունը դեռևս ավելի զորեղ են, քան գերտերությունների միջև լարվածության, պատժամիջոցների, տնտեսական կապերի թուլացման և նույնիսկ հիբրիդային պատերազմների հանգեցնող հակամարտությունները: Սակայն, ի հեճուկս գիտության միավորող դերին և զորեղ ուժին, անգամ այսօրինակ համագործակցությունն է փխրուն և վտանգված: Ռուսաստանը, օրինակ, ուկրաինական իրադարձություններով պայմանավորված, դիտարկում է ՄՏԿ-ում գործունեության դադարեցման և իր մոդուլների հիման վրա սեփական կայանի ստեղծման հնարավորությունը¹⁷: Արկտիկայի խորհրդի որոշ երկրներ էլ բացահայտ կերպով ի ցույց են դնում տարածքի հանդեպ իրենց հավակնությունները՝ չխորշելով անգամ ռազմատենչ հոետորաբանությունից: Այս առումով, Անտարկտիկայի շուրջ իրավիճակը հարաբերականորեն ավելի հանգիստ է: Եվ եթե գիտության դիվանագիտությունը չհաղթի մաքիավելիական ռեալիզմին, առավելապաշտությանն ու ծավալապաշտությանը, ապա գերտերությունների հակասությունները, ի

¹⁷ Space.com staff, Ukraine invasion's impacts on space exploration: Live update, 03 June 2022, available at <https://www.space.com/news/live/russia-ukraine-invasion-space-impacts-updates>

թիվս այլ «թեժ» կետերի, այժմ էլ Արկտիկայի ու Անտարկտիկայի սառցաբեկորների վրա կդրսևորվեն, իսկ մարդկության ամե-

նաթանկարժեք նախագծերից մեկի՝ ՄՏԿ հետագա ճակատագիրը կդառնա չափազանց մշուշոտ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Arctic Council, Declaration of the Establishment of the Arctic Council, September 19, 1996, https://oaarchive.arctic-council.org/bitstream/handle/11374/85/EDOCS-1752-v2-ACMMCA00_Ot-tawa_1996_Founding_Declaration.PDF?sequence=5&isAllowed=y
2. Arctic Council, International Cooperation in the Arctic, <https://www.arctic-council.org/explore/work/cooperation/>
3. Berkman, Paul Arthur, Lars Kullerud, Allen Pope, Alexander N. Vylegzhanin, and Oran R. Young. "The Arctic science agreement propels science diplomacy." *Science* 358, no. 6363 (2017): 596-598.
4. Berkman, Paul Arthur. "Science diplomacy and its engine of informed decisionmaking: operating through our global pandemic with humanity." *The Hague Journal of Diplomacy* 15, no. 3 (2020): 435-450.
5. "Human Spaceflight and Exploration – European Participating States". European Space Agency (ESA). 2009. Retrieved 17 January 2009.
6. The Secretariat of the Antarctic Treaty, Related agreements, available at <https://www.ats.aq/e/related.html>
7. The Secretariat of the Antarctic Treaty, The Antarctic Treaty, available at <https://www.ats.aq/e/antarctictreaty.html>
8. Space.com staff, Ukraine invasion's impacts on space exploration: Live update, 03 June 2022, <https://www.space.com/news/live/russia-ukraine-invasion-space-impacts-updates>
9. US Government, Treaties and other international act series 1927, Arrangement Between the UNITED STATES OF AMERICA and OTHER GOVERNMENTS Signed at Washington January 29, 1998, <https://www.state.gov/wp-content/uploads/2019/02/12927-Multilateral-Space-Space-Station-1.29.1998.pdf>

Альберт АЙРАПЕТЯН

*Старший научный сотрудник научно-исследовательского центра «Амберд»,
Ассистент кафедры международных экономических отношений, АГЭУ,
кандидат экономических наук*

ГЕОПОЛИТИЧЕСКАЯ ХРОНИКА

НАУЧНАЯ ДИПЛОМАТИЯ: ОБЩИЙ ЗНАМЕНАТЕЛЬ, ОБЪЕДИНЯЮЩИЙ СВЕРХДЕРЖАВЫ

Научная дипломатия, согласно определению Беркмана, представляет собой международный, междисциплинарный и инклюзивный (целостный) процесс, предполагающий принятие взвешенных решений для достижения баланса между национальными интересами и общими интересами человечества на благо всех людей на Земле из поколения в поколение. Она широко используется для преодоления разногласий сверхдержав в уникальной научной деятельности, где требуются совместные усилия ряда стран. Даже в условиях обострения международной напряженности государства не отказываются от научной дипломатии и продолжают сотрудничество. В этой статье представлен обширный взгляд на то, как научная дипломатия работает в таких областях как Арктика, Антарктика и Международная космическая станция.

Ключевые слова: наука, дипломатия, Арктический совет, Договор об Антарктике, Международная космическая станция

Albert HAYRAPETYAN

*Senior Researcher of «Amberd» Research Center,
PhD in Economics, Assistant Professor
in the Chair of International Economics, ASUE*

GEOPOLITICAL CHRONICLE

COSCIENCE DIPLOMACY: A COMMON DENOMINATOR UNITING THE SUPERPOWERS

Science diplomacy, according to Berkman’s definition, is an international, interdisciplinary and inclusive (holistic) process, involving informed decision-making to balance national interests and common interests for the benefit of all on Earth across generations. It is widely used to overcome the discrepancies of the superpowers in unique scientific activities, where the joint efforts of a number of countries is required. Even when the international tension is heightened, states still do not abandon the science diplomacy and keep cooperating. The paper provides an informed look on how science diplomacy works in areas such as Arctic region, Antarctic region and the International Space Station.

Key words: *science, diplomacy, Arctic Council, Antarctic Treaty, International Space Station*